

Պ Ա Յ Մ Ա Ն Ա զ Ի Ր N _____

« _____ » 2014թ. ք. Վանաձոր
«Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարան» պետական ոչ
առևտրային կազմակերպությունը / հետագայում «Համալսարան»/, որը գործում է իր
կանոնադրության հիման վրա, թիվ 265 լիցենզիայով, ի դեմս ռեկտոր Գուրգեն
Կիպրոսի Խաչատրյանի մի կողմից
և մյուս կողմից _____ (հետագայում

(անուն, հայրանուն, ազգանուն)

«Ուսանող») կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ

1.1. Համալսարանը Ուսանողին՝ _____ թ. ծնված

_____ *(անուն, հայրանուն, ազգանուն)*

անձնագիր _____, բնակվում է _____

(հասցե)

հրամանագրում է պետական չափորոշիչով մագիստրոսի հիմնական կրթական ծրագրով

2 տարի ուսման տևողությամբ («_07_» _____ 09 _____ 2015 թ. մինչև «_01_» _____ 07 _____ 2017 թ.) առկա
ուսուցման 032000 «Հանրային կառավարում» մասնագիտությամբ կրթություն ստանալու համար:
(դասիչը, անվանումը)

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Համալսարանը պարտավոր է

2.1.1. Ուսանողին հրամանագրել բարձրագույն մասնագիտական անվճար (պետության կողմից
ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) կրթություն ստանալու
իրավունքով:

2.1.2. Ուսանողին հրամանագրելիս և նրա ուսումնառության ընթացքում ղեկավարվել ՀՀ գործող
օրենսդրությամբ, ՀՀ Կ և Գ համակարգում գործող ընդունելության, տեղափոխման, ուսանողական
իրավունքների վերականգնման, ուսանողական նպաստի և կրթաթոշակի տրամադրման հարցերը
կարգավորող իրավական ակտերով և Համալսարանի «Ներքին կարգապահական կանոնների»
դրույթներով:

2.1.3. Կազմակերպել և ապահովել Ուսանողի կողմից հիմնական կրթական ծրագրի յուրացումը
տվյալ մասնագիտության գծով:

2.1.4. Ուսանողին տեղափոխել հաջորդ կուրս նախորդ ուսումնական տարվա ուսուցման ծրագրի
լրիվ ավարտից հետո:

2.1.5. Ակադեմիական արձակուրդի պատճառով ուսումնառությունը դադարեցնելուց հետո
ուսանողական իրավունքները վերականգնված ուսանողին, նրա համաձայնությամբ, տեղափոխել
հարակից մասնագիտության այն դեպքում, երբ սույն պայմանագրում նշված մասնագիտությամբ
ուսուցումն ինստիտուտի կողմից շարունակելն անհնարին է:

2.1.6. Ուսանողի կողմից ՀՀ պետական չափորոշիչներով նախատեսված ավարտական պետական
որակավորման քննությունները հանձնելուց և ավարտական որակավորման աշխատանքը
պաշտպանելուց հետո ուսանողին տալ բարձրագույն կրթության մասին պետական նմուշի
փաստաթուղթ, ինչը կհավաստի սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտ:

2.2. Համալսարանն իրավունք ունի

2.2.1. Պայմանագիրը լուծել Ուսանողի կողմից անհարգելի բացակայությունների, ակադեմիական
անբավարար առաջադիմության, ՀՀ գործող օրենսդրությամբ և Համալսարանի «Ներքին
կարգապահական կանոններով» նախատեսված այլ դեպքերում:

2.2.2. Մեկ ուսումնական տարվա քննությունների – ստուգարքների արդյունքի հաշվառմամբ
մրցութային կարգով վերանայել նրան կրթությունը անվճար տրամադրելու իրավունքը:

2.2.3. Ընթացիկ ուսումնական դասընթացների ծրագրերը չկատարելու դեպքում հարգելի
պատճառների առկայության պայմաններում Ուսանողի դիմումի հիման վրա նրան տալ
ուսումնական տարվա կամ կիսամյակի ընթացքում կրկնակի ուսուցման հնարավորություն՝
պայմանով, որ կրկնակի ուսուցման համար նա վճարի նախատեսված վարձաչափի 100 տոկոսի
չափով:

2.3. Ուսանողը պարտավոր է

2.3.1. Ժամանակին կատարել ուսումնական պլանի և ծրագրերի պահանջները:

2.3.2. Մինչև քննաշրջանը կատարել ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով
նախատեսված աշխատանքները:

2.3.3. Կատարել ուսանողների համար Համալսարանի «Ներքին կարգապահական կանոններով» նախատեսված պարտականությունները և պարտավորությունները:
2.3.4. Համաձայն պայմանագրի 2.2.2. կետի՝ պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ սովորելու իրավունքը կորցնելու և լրացուցիչ պայմանագիր կնքելու դեպքում տեղափոխվել վճարովի համակարգ:
2.3.5. Իր ազգանվան, անվան, հայրանվան, հասցեի և հեռախոսահամարի փոփոխության դեպքում տասնօրյա ժամկետում տեղեկացնել ինստիտուտին:

2.4. Ուսանողն իրավունք ունի

2.4.1. Օգտվելու ՀՀ «Կրթության մասին» օրենքով, ՀՀ «Բարձրագույն – հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքով, Համալսարանի «Ներքին կարգապահական կանոններով» նախատեսվող իրավունքներից:

2.4.2. Օգտվելու ՀՀ «Կրթության մասին» օրենքով նախատեսված բարձր առաջադիմության և (կամ) սոցիալական վիճակի հաշվառմամբ տրամադրվող նպաստից:

2.4.3. Ժամկետային գինվորական ծառայության զորակոչվելու, ակադեմիական արձակուրդի պատճառներով ուսումնառությունը դադարեցնելուց հետո ուսանողական իրավունքները վերականգնելիս, իր համաձայնությամբ, տեղափոխվել հարակից մասնագիտության այն դեպքում, երբ սույն պայմանագրում նշված մասնագիտությամբ ուսուցումն ընդհատվել է Համալսարանի կողմից շարունակելն անհնարին է:

3. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Սույն պայմանագիրը կնքվում է երկու հավասար իրավական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկ օրինակ:

3.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն երկկողմանի ստորագրելու պահից:

3.4. Պայմանագրի մեջ փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր ձևով, որը կհանդիսանա սույն պայմանագրի բաղկացուցիչ անբաժանելի մասը:

Ուսանող

ՀՀ Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան
պետական համալսարան

377200 ՀՀ ք. Վանաձոր
Տիգրան Մեծի 36
Ռեկտոր
Գուրգեն Կիպրոսի Խաչատրյան

(ստորագրություն)

(անուն, հայրանուն, ազգանուն)
Անձնագրի սերիա, № _____
տրված «___» _____ 20__թ.
գրանցված _____

հեռախոս _____

(ստորագրություն)

Ստացա մեկ օրինակը _____
(ստորագրություն)